ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15 մարտի 2011թ. **N --- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի առաջին եռամսյակում հատկացնել 52,000.0 հազ. դրամ՝ սոցիալական և բարեգործական ծրագրեր իրականացնող կազմակերպություններին աջակցելու նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշմամբ հատկացված գումարի բաշխումը՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ստացող կազմակերպությունների:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի վարչական շրջաններում պարբերաբար առաջանում են սոցիալական բնույթ կրող, ինչպես նաև առօրյա խնդիրներ, որոնք անհապաղ լուծումներ են պահանջում, որոնց համար բյուջեում ծախսային ուղղություններ չեն նախատեսվել և իրականացվում են հիմնադրամների միջոցով: Միաժամանակ, բյուջեում նմանատիպ ծախսային ուղղություններ նախատեսելու դեպքում խնդիրներ են առաջանում սահմանված ընթացակարգերի ժամկետների առումով, ինչպես նաև մի շարք ծրագրեր կարող են իրականացվել տարբեր կազմակերպությունների միջոցներով՝ համաֆինանսավորմամբ:

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևանի վարչական շրջաններում սոցիալական բնույթ կրող, ինչպես նաև բարեկարգման ծրագրեր իրականցնող կազմակերպություններին դրամաշնորհներ հատկացնել՝ վերոգրյալ դեպքերում լուծումներ տալու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 52,000.0 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ